

1. Լուծել $7 \leq x \leq 8$ ոչ խիստ անհավասարումը և դրա միջոցով պարզել, թե n ղ դարերում են արաբական նվաճողների դեմ պայքարը գլխավորող Մամիկոնյանները ամրացել Մասունում:
7-8 դարերին
2. Գտնելով՝ $3(2x-1)=45$ հավասարման արմատը(կամ լուծումը), պարզեք, թե n ղ դարում են Մամիկոնյաններից սերած Թոռնիկյանները իշխել Մասունում:
8-րդ դարերին
3. Գտնելով՝ $2020-2x=318$ հավասարման արմատը(կամ լուծումը), պարզեք, թե n ղ թվականին են Մասունի բնակիչները՝ Հովհան Խութեցու գլխավորությամբ, Մշո դաշտում ջախջախել արաբական զորախումբը և սպանել զորապետ Յուսուփին:
 $2020-318=2x$
 $1702=2x$
 $x=1702:2$
 $x=851$
4. Գտնելով՝ $3x-536=2020$ հավասարման արմատը(կամ լուծումը), պարզեք, թե n ղ թվականին են Հայաստան ներխուժած արաբական զորաբանակը՝ Բուդայի առաջնորդությամբ, Մասունում կոտորել 3 և 10000 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկի չափով մարդ: Գտնել նաև զոհերի քանակը: Այնուհանդերձ, Թոռնիկյաններն իրենց ձեռքում են պահել Մասունը և շարունակել ազատագրական կռիվները: Մասունի հերոսական պայքարի հիման վրա ձևավորվել է «Մասնա Օռեր» էպոսը:
 $3x=2020+536$
 $3x=2556$
 $x=2556:3$
 $x=852$
5. Լուծեք $8 \leq x \leq 10$ ոչ խիստ անհավասարումը և պարզեք, թե «Մասնա Օռեր»-ի ամենաբնորոշ գիծը՝ հերոսական անպարտելի ոգին, հատկապես n ղ դարերի արաբական բռնապետության դեմ մաքառումների հերոսական պատմությամբ է պայմանավորված:
8-10 րդ.դարերին
6. Գտնելով՝ $4x-1874-3x=-1$ հավասարման արմատը(կամ լուծումը), պարզեք, թե Գարեգին Սրվանձտյանցը n ղ թվականին է էպոսի պատումներից մեկն առաջին անգամ գրի առել(Մշո Առնիստ գյուղում) և 1 տարի հետո հրատարակել «Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով (Կ. Պոլսում): Գտնեք նաև հրատարակման տարեթիվը:
 $x=-1+1874$
 $x=1874-1=1873$ թ.
 $1873+1=1874$ թ.
7. Գտեք $2(3x-10+2x+20-4x)=3798$ հավասարման արմատը(կամ լուծումը) և պարզեք, թե n ղ թվականին է Մանուկ Աբեղյանը հրատարակել էպոսի մապումներից մեկի մեկ այլ տարբերակ՝ «Դավիթ ու Մհեր» (Շուշիում)
 $2x+20=3798$
 $2x=3798-20$

$$2x=3778$$

$$x=3778/2$$

$$x=1889$$

8. Գտեք $2020-x=2x-3797$ հավասարման արմատը (կամ լուծումը) և կպարզեք, թե ո՞ր թվականին է Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծել 6-ի տասնապատիկ չափով պատումներից բաղկացած համահավասար բնագիր, որը թարգմանվել է տարբեր լեզուներով:

$$2x+x=3x$$

$$3x=5817$$

$$x=1939$$

9. Գտեք $x-2020=-130$ հավասարման արմատը (կամ լուծումը) և կպարզեք, թե ո՞ր թվականից են սկսվել «Մասնա ծոեր» էպսի գրական մշակումները:

$$x=2020-130$$

$$x=1890$$

10. Գտեք $2x-3807=-1$ հավասարման արմատը և պարզեք, թե ո՞ր թվականին է Դավիթ ճյուղի լավագույն մշակումը ներկայացրել Հովհաննես Թումանյանը («Մասունցի Դավիթ»):

$$2x=-1+3807=3806$$

$$3806:2=1903$$